

# ԾՐԱԳԻՐ

ՄԵԾԱՀԱՍՏԱԿՆԵՐԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԻՍԱԳՐԱԳԻՏՈՒ-  
ԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ  
ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գ Ե Տ Ա Կ Ա Ն    Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
Թ Բ Ի Լ Ի Ս Ի  
1938 թ.

379  
ժ-98

379

D-98

4

## Ծ Ր Ա Գ Ի Ր

ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՅՄԱՆ

Դ Պ Ր Ո Ց Ն Ե Ր Ի

Հ Ա Յ Ո Ց Լ Ե Ձ Ո Ի

(200 ԺԱՄ)

Ընթերցանություն.—Հատվող այբբենի գործածությունը, կարողանալ բառեր կազմել և կարդալ առանց տառ բաց թողնելու: Կարողանալ բարձրաձայն, կանոնավոր կերպով կարդալ պարզ պատմվածքներ ու հոգվածներ՝ կանգ առնելով վերջակետից հետո:

Կանոնավոր կարդալ թե՛ դասագրքում—այբբենարանում յեղած ձեռագիր հոգվածները և թե՛ ուսուցչի կողմից գրատախտակի վրա գրած տեքստը:

Կարողանալ պատասխանել կարդացածի շուրջն ուսուցչի կողմից արված պարզ հարցերին:

Կարողանալ կարդալ տեղական լրագրերում յեղած մատչելի հոգվածները, հասկանալ և հաղորդել նրանց համառոտ բովանդակությունը:

Աստիճանաբար վարժեցնել կանոնավոր, արտահայտիչ և բարձրաձայն կարդալուն, իսկ ընթերցարանի բաժնում սկսել նաև ինքնուրույն կերպով լուռ, գիտակցական կարդալու փորձեր կատարել:

Կարողանալ անհասկանալի բառերն առանձնացնել: Կարդալու ժամանակ հասկանալ ընդհանուր գործածական տերմինները:

Գրավոր աշխատանք.—Պահպանելով տառերի և բառերի սովորական կանոնավորությունները, կարողանալ գրել մաքուր և պարզ ինքնուրույն կերպով կարողանալ գրել համառոտ նախադասու-



3071

38

Թյուրաններ՝ առանց տառեր բաց թողնելու և առանց ավելորդ տառեր գրելու բառերի մեջ, պահպանել նախադասութեան վերջում վերջակետի գործածութիւնը:

Գրավոր աշխատանքի ժամանակ կարողանալ պահպանել տարբական ուղղագրական կանոնները՝ մեծատառի գործածութիւնը նախադասութեան և հատուկ անունների սկզբում, ոժանդակ բայի առանձին գրվելը. գրութեան և արտասանութեան տարբերութիւնը:

Կարողանալ անսխալ կերպով գրել քաղաքական և արտադրական այն տերմինները և բառերը, վորոնք սովորաբար առօրյա կյանքում գործածական են (հեղափոխութիւն, կոլեկտիվ, կոմունիստութիւն, տեխնիկում, կոմբայն):

Գրել և կարողանալ կարգաւ ամենագործածական կրճատ բառերը ԽՍՀՄ, ՀԽՍՀ, ՎԽՍՀ ժողկոմխորհ, Գործկոմ, Գյուղխորհուրդ, ՄՏԿ:

Կարողանալ գրի առնել իր մտքերը, գրել հասցի, լրացնել հարցաթերթիկ, պարզ ու մատչելի հարցերին տալ գրավոր պատասխաններ, տարելեւրջում նամակ:

## ԲԱՅԱՏՐԱԿԱՆ

(Մշակման հաշտդակաւորյունը)

Ծրագիրը կազմված է յերկու հիմնական բաժնից՝ 1) ընթերցանութիւն և 2) գրավոր աշխատանք:

Ինքնին հասկանալի չէ, վոր ծրագրի հիշված բաժինների նյութերը մշակվելու յեն վոչ թէ առանձին-առանձին, այլ սերտ կերպով կապակցված են լինելու միմյանց հետ: Խոսքի զարգացման, ինչպես նաև գրքով ու լրագրով տարվող աշխատանքները պետք է շաղկապված լինեն ընթերցանութեան և գրավոր աշխատանքների հետ:

Ընթերցանութիւն.— Վորպեսզի կարողանան ձեռք բերել գրելու և կարդալու սկզբնական ունակութիւն, սովորողներն ամենից առաջ պետք է հասկանան, վոր բառը կազմված է վանկերից, իսկ վանկը՝ հնչյուններից: Նրանք պետք է իմանան, վոր խոսքը բաժանվում է բառերի, բառերը՝ վանկերի, վանկերը՝ հնչյունների և վոր յուրաքանչյուր հնչյուն ունի համապատասխան տառ:

Սովորողները կարդալու ժամանակ պետք է կարողանան բա-

ռերը բաժանել վանկերի և վանկերը հնչյունների—տառերի: Հատվող այբբենով կազմել բառեր, կանոնավոր գրի առնել կազմված բառերը և կարդալ:

Այբբենարանով կարդալու ժամանակ, բառերի ընտրութեան տեսակետից պետք է պահպանել աստիճանականութիւն, ա) միավանկ ե յերկվանկ բառեր կարդալը (վար, ցանք, նավ, ցորեն, զարի, արոր և այլն) և այնպիսի պարզ նախադասութիւններ, վորոնք կազմված լինեն նման բառերից. բ) յերեք վանկանի բառեր կարդալը (մեքենա, շարքացան և այլն) և կարդալ այնպիսի նախադասութիւններ, վորոնք կազմված են թէ այս և թէ նախորդ տիպի բառերից, գ) մեկ փակ վանկ ունեցող բառերը և համապատասխան նախադասութիւնները կարդալը դ) կարդալ այնպիսի բառեր, վորոնք ունեն յերկու բաղաձայն:

Սկզբնական շրջանում պետք է անցնել այնպիսի բառեր, վորոնք գրվում են այնպես, ինչպես արտասանվում են, խույս տալով այնպիսի բառերից, վորոնց ուղղագրութիւնը տարբեր է արտասանութիւնից, որինակ՝ մաքր, վաքր և այլն:

Սովորողները, աստիճանաբար ձեռք բերելով կարդալու ունակութիւն, սկսում են կարդալ համառոտ պատմութիւններ, հողվածներ, լողունգներ, պլակատներ, հայտարարութիւններ, պահանջներով կետադրական նշաններից վերջակետը և պատասխանելով կարդացած նյութի շուրջը տրված հարցերին:

Ուսումնական տարվա առաջին կիսամյակում սովորողները պետք է ձեռք բերեն պարզ պարբերութիւններն ամբողջ բառերով, իսկ բարդ, յերկար բառերը՝ վանկ-վանկ կարդալու ունակութիւն:

Յերկրորդ կիսամյակում սովորողների մեջ պետք է ամրացնել ամբողջ բառերով համեմատաբար բարդ պարբերութիւններ կարդալու ունակութիւն: Բարձրաձայն կարդալու հետ միասին սովորողներին վարժեցնել դասագրքում, այլ գրքույկներում և լրագրերում յեղած պարզ հոլվածների լուռ ընթերցմանը: Նման ձևի ընթերցանութիւնը դասատուն պետք է անցնի այն ժամանակ, յերբ սովորողները կսկսեն ինքնուրույն կերպով կարդալ պարզ հոլվածներ: Վորպես լրացուցիչ նյութ դասատուն բարձրաձայն կարդում է սովորողներին հետաքրքրող լրագրական առանձին հոլվածներ կամ պատմվածքներ, բացատրելով սովորողներին անհասկանալի բառերն ու դարձվածքները. միաժամանակ դասատուն սովորողներին ևս մասնակից է դարձնում գրքեր և լրագրեր կար-

դալուէն: Սովորողներին մեջ ընթերցանութեան սեր զարթեցնելու և այդ ունակութիւնը զարգացնելու նպատակով, դասերից դուրս պետք է կազմակերպել լրագրի ու գրքի ընթերցանութիւն:

Ընթերցանութիւն սովորեցնելու հետ միասին պետք է սովորողներին պատմաստել ուրիշների կարգալը լսելու և հասկանալու ունակութիւն (պարզ հոգւածներ և գեղարվեստական գրվածքներ): Անհրաժեշտ է սովորողներին ծանոթացնել գրադարանին ընդհանուր նշանակութեան և գրքեր ստանալու կարգին հետ, ընդգրկելով նրանց գրադարանային աշխատանքների մեջ:

Դասատուն հաճախ սովորողներին տալիս է տանը կարգալու համար հետաքրքրական նյութեր, հետեւելով, վոր նրանք անպայման կարդան և հաշվետու լինեն իրեն:

Սովորողների խօսքի զարգացման աշխատանքները տարվում են անծանոթ բառերի ու տերմինների բացատրութեամբ, պատմաստելով այնպիսի ունակութիւն, վորպեսզի նրանք կարողանան դասատուի տված հարցերին պատասխանել բանավոր և գրավոր կերպով և կարգացած հոգւածի բովանդակութիւնը կապակցված կերպով պատմել:

Դասատուն հետեւում է սովորողների խոսելու ձևին և ուղղում է նրանց սխալները:

Գրովոր աշխատանք.— Ձեռագրի ուսուցման ժամանակ սովորողներին պետք է վարժեցնել կանոնավոր նստել, գրիչն ու մատիտը կանոնավոր բռնել, կարողանալ վարվել տետրի ու թանաքի հետ: Սովորողները պետք է կարողանան կանոնավոր կերպով ձևակերպել փոքրատառերն ու մեծատառերը: Տառեր գրելու հետ միասին սովորողները վարժվում են գրել ամբողջ բառեր և նախադասութիւններ, ձեռք են բերում հասկացողութիւն անունների ու ազգանունների, ինչպես նաև նախադասութեան սկզբում մեծատառերի գործածութեան մասին:

Ուսումնական տարվա առաջին կիսամյակի վերջում սովորողները պետք է կարողանան պարզ և կանոնավոր ձևակերպված տառերով գրքից արտագրել տպագիր և ձեռագիր տեքստերը և լսողութեամբ (նախորդ վերլուծելուց հետո) գրի առնել կարճ նախադասութիւններ՝ բաղկացած այնպիսի բառերից, վորոնք գրվում են այնպես, ինչպես արտասանվում են: Սովորողներն արտագրութիւն կատարելու ժամանակ պետք է կարողանան պահպանել կետագրութեան և մեծատառերի կանոնները:

Ուսումնական տարվա յերկրորդ կիսամյակի ընթացքում սո-

վորողները պետք է ավելի ամրացնեն ամբողջ անցած նյութը, ձեռք բերեն ուղղագրական գիտելիքներ և ունակութիւններ:

Ուղղագրական գիտելիքները և ունակութիւններն անցնում են հետևյալ կարգով:

Հասկացողութիւն ձայնավոր և բաղաձայն տառերի մասին: Բառերի բաժանումը վանկերի: Տողադարձ:

Վերնագիրը, պարբերութիւնը և հատուկ անունները մեծատառով սկսելը, վերջակետի գործածութիւնը:

Պարագմունքների ամբողջ ընթացքում սովորողները վարժվում են, առանց տառեր բաց թողնելու, ամենագործածական քաղաքական և արտադրական տերմինները, համառոտած բառերն անսխալ գրել:

Այս և նման ձևով սովորողները հասնում են ինքնուրույն գրավոր աշխատանք կատարելուն: Սովորողների գրավոր ունակութիւնները պարզելու և այն խորացնելու նպատակով՝ հաճախ գրատախտակի վրա անհատ սովորողներին գրավոր վարժութիւններ է տալիս, տալով միաժամանակ տնային աշխատանք:

## ԹՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

(130 ԺԱՄ)

Ծրագրի ծավալը.— Վեցանիշ ամբողջ թվերի կարգալն ու գրելը— կլոր միլիոնների կարգալն ու գրելը, կլոր թվերի գումարումն ու հանումը, կլոր թվերի՝ 10, 100, 1000 բազմապատկումն ու բաժանումը՝ միանիշ թվերի վրա. յերկարության, ծանրության և ծավալի մետրական չափեր, ժամանակի չափեր, գաղափար մասի և սովորի մասին:

## ԲԱՅԱՏՐԱԿԱՆ

(Մշակման նաշնորդականությունը)

1. Առաջին տասնյակի թվերի հաշվումը: 10 թիվը: Զերոյի նշանակութունը թվերը թվանշաններով գրելիս: Կլոր տասնյակներ: Գումարման, հանման և հավասարման նշաններ: 20-ից բարձր յերկանիշ թվերի հաշվումը: Թվանշանների տեղերի նշանակութունը թվերի մեջ: Թվերի հաշվումը 11-ից մինչև 19-ը:

2. Թվերի բանավոր գումարումը հարյուրի սահմանում և ապա նմանների գրավոր լուծումը մի սողի վրա (վոչ իրար տակ): Գումարման աղյուսակը:

3. Թվերի բանավոր հանումը հարյուրի սահմանում և նմանների գրավոր լուծումը մի սողի վրա (վոչ իրար տակ) հանման աղյուսակը: Գումարման և հանման ստուգումը:

4. Հարյուրի սահմանում բանավոր գումարման և հանման պարզեցրած ձևերը:

5. Յեռանիշ և քառանիշ թվերի հաշվումը: Թվերի կարգերը:

6. Յեռանիշ և քառանիշ թվերի գրավոր գումարումը: Գումար-

ընդներ: Գումար: Զերոն գումարելիների մեջ: Բարդ անվանական թվերի գումարումը (սուբլի և կոպեկ, որեր և ժամեր և այլն):

7. Յեռանիշ և քառանիշ թվերի գրավոր հանումը: Նվազելի: Հանելի: Մնացորդ կամ տարբերություն: Զերոն նվազելիի մեջ: Գումարման և հանման ստուգումը: Բարդ անվանական թվերի հանում (սուբլիներ և կոպեկներ, որեր և ժամեր և այլն):

8. Հոտմական թվանշաններ: Հոտմական թվանշաններով գրելը: 12-ի սահմանում և նրանց կարգալը:

9. Հնգանիշ և վեցանիշ թվերի հաշվումը: Միավորների և հազարավորների դասերի կարգերը: Հնգանիշ, վեցանիշ թվերի գումարումն ու հանումը:

10. Գաղափար բազմապատկման մասին: Բազմապատկելի: Բազմապատկիչ: Արտադրյալ: Միանիշ թվերի բազմապատկման աղյուսակը:

Յերկանիշ թվի բանավոր բազմապատկումը միանիշ թվով: Զերոյով վերջացող թվերի բանավոր և գրավոր բազմապատկումը միանիշ թվով: Զերոները բազմապատկելիի մեջ,

11. Գաղափար բաժանման մասին: Բաժանելի: Բաժանարար: Գանորդ: Բաժանման աղյուսակը 100-ի սահմանում: Բազմապատկման և բաժանման ստուգումը: Յերկանիշ և յեռանիշ թվերի բանավոր բաժանումը միանիշ թվի վրա, յերբ բաժանելիի յուրաքանչյուր կարգն առանց մնացորդի բաժանվում և բաժանարարի վրա: Բանավոր բաժանում մնացորդով: Յերկանիշ թվի բանավոր բաժանումը միանիշ թվի վրա, յերբ ստացվում և յերկանիշ քանորդ: Բազմանիշ թվի բաժանումը միանիշ թվի վրա (կիսագրավոր յեղանակով): Զերոները բաժանելիի մեջ և քանորդի վերջում:

12. Ամբողջ թվերի հաշվումը մինչև միլիոն: Գաղափար միլիոնի մասին: Կլոր միլիոնների հաշվումը: Կլոր միլիոնների բանավոր գումարումն ու հանումը և նրանց գրավոր լուծումը մի սողի վրա: Զերոները նվազելիի մեջ:

13. Ամբողջ թվի բազմապատկումն ու բաժանումը 10-ի, 100-ի և 1000-ի վրա:

14. Յերկարության, ծանրության և ծավալի մետրական չափեր: Ոտոր չափերի վերածումն ավելի մանրերի և ընդհակառակը: Բարդ անվանական թվերի գումարումն ու հանումը: Ժամանակի չափեր (գար, տարի, ամիս, օր, ժամ, րոպե և վայրկյան): Ժամանակի խոշոր չափերի փոխարինումն ավելի մանր չափերով:

15. Գաղափար մասի վերաբերյալ: Մասեր կաղմելը, կարգալը  
և գրելը—<sup>1</sup>/<sub>2</sub>, <sup>1</sup>/<sub>3</sub>, <sup>1</sup>/<sub>10</sub>, <sup>1</sup>/<sub>100</sub>:

Գաղափար տոկոսի մասին: Տոկոսի արտահայտելը կոտորակով  
(50 տոկ., 25 տոկ. և 10 տոկ.):

16. Անցածի կրկնությունը և հաշվառում:

Ծանոթություն.—ա. Յուրաքանչյուր բաժինն անցնելիս  
պետք է խնդիրներ լուծել: Ամբողջ դասընթացի ընթացքում  
հարկավոր է հատկապես ուշադրություն դարձնել ուսուցչի  
ղեկավարութեամբ սովորողների կողմից խնդիրներ կաղմելու  
վրա, վորոնց տվյալները պետք է վերցված լինեն ձեռնար-  
կության, քաղաքի, շրջանի վիճակագրական տեղեկություն-  
ներից:

բ. Վորպես ոժանգակ պարագաներ դպրոցում պետք է  
լինեն համրիչներ, չափերի նմուշներ, բաղմապատկման, բա-  
ժանման, մետրական չափերի պատի աղյուսյակներ, մասերը  
և տոկոսները պատկերող աղյուսակներ:

### ԺԱՄԵՐԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ԹԵՄԱՆԵՐԻ

1) Հարյուրի սահմանում ամբողջ թվերի կարգալը, գումարելը  
և հանելը (30 ժամ):

2) Յեռանիշ և քառանիշ, ինչպես և հնգանիշ և վեցանիշ թվերի  
հաշվումը, գումարումը և հանումը: Հոտմեական թվանշաններ (26  
ժամ):

3) Բաղմապատկում միանիշ թվով (18 ժամ):

4) Բաժանում միանիշ թվի վրա (22 ժամ):

5) Կլոր միլիոնների կարգալը, գումարումը և հանումը: Բաղ-  
մապատկում և բաժանում 10-ի, 100-ի և 1000-ի վրա: Մետրական  
չափեր: Ժամանակի չափեր: Գաղափար մասի և տոկոսի մասին  
(34 ժամ):

Ծանոթություն.—Արտագրական պլանը կաղմելու ժամա-  
նակ դասատուն պետք է ժամեր հատկացնի կրկնության  
համար:

## Ծ Ր Ա Գ Ի Ր

### ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿԻՍԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՅՄԱՆ ԴՊՐՈՅՆԵՐԻ

ՀԱՅՈՑ ԼԵՂՎԻ ԾՐԱԳԻՐ

(145 ժԱՄ)

Կարդալու ունակություններ

Կարողանալ կարդալ բարձր, առանց բառերն աղավաղելու, ճիշտ,  
աբագ, հասկանալով ու արտահայտիչ՝ պահպանելով առողջանու-  
թյան և կետադրության կանոնները:

Լուռ կարդալու ունակություններ: Կարողանալ պատմել կար-  
գացածի բովանդակությունը:

Կարողանալ ոգավել գրքից, ծանոթանալ գրքի, հետ ըստ նրա  
հեղինակի, հրատարակության թվի և անվանաթերթի: Կարողանալ  
ողտվել ցանկից: Կարողանալ կարդալ թերթ, գտնել նրա մեջ ան-  
հրաժեշտ նյութը, հասկանալ վերնագրի, առաջնորդողի, հեռագրե-  
րի, թղթակցությունների նշանակությունը: Կարողանալ պատմել  
թերթի վերջին յերկու-յերեք համարների կարևոր նյութերի բո-  
վանդակությունը:

Կարողանալ բառարանում գտնել կարդալու ժամանակ պատա-  
հող անծանոթ բառերի բացատրությունը:

Կարողանալ գրել նամակ, հասցե, հեռագիր, դիմում, ստացա-  
կան, լրագրագիր, արձանագրություն:

Կարողանալ պատասխանել տրված հարցերին: Կարողանալ կաղ-  
մել իր յեվույթի կոնսպեկտը:

Կարողանալ կազմել թղթակցություն լրագրի համար, նկարա-  
գրել վորեն բան իրենց ապրումների կամ տեսածի վերաբերյալ,  
գրել կամ բանավոր գնահատական տալ կինո-նկարի, ներկայաց-  
ման կամ կարգացած գրքի մասին:

Գրավոր աշխատանքի տեսնել, ուղղագրություն յեվ փրականու-  
թյուն

Գրավոր տեխնիկայի ամրացում, կարողանալ գրել առանց  
տառեր բաց թողնելու և առանց ավելորդ տառերի, կարողանալ  
ավելի բարդ (համեմատած ուսման առաջին տարվա հետ), պարզ  
և գեղեցիկ գրել մի տողանի տետրում, 750 թեքություն:

Կարողանալ հոգևածից և գեղարվեստական յերկից անխալ  
արտագրել քաղվածքներ:

Գաղափար նախադասություն մասին: Մեծատառը նախադասու-  
թյան սկզբում: Վերջակետը նախադասություն վերջում: Գիտենալ,  
թե նախադասություններից ինչպես և պատմվածք ստացվում:

Առգաղափարաց ցանկեր: Գիտենալ հարցական ու բացական-  
չական նշանների և շեշտի նշանակությունը բանավոր խոսքի և  
գրավորի մեջ, ինչպես և նրանց գործածություն պարզագույն  
գեղեցիկ:

Գիտենալ բառերի կապակցությունը նախադասության մեջ բա-  
խմանով: Կարողանալ լրացնել նախադասությունների մեջ բաց  
թողած կամ հարցերով փոխարինված բառերը, թե բանավոր, թե  
գրավոր, որինակ՝ յես . . . . . տուն: Աշակերտները սովո-  
րում . . . . . Ասակերտները վերադարձան . . . . . (վորսելից)  
և այլն:

Մեծատառը հատուկ անունների սկզբում: Գիտենալ, վոր մարդ-  
կանց անունները, հայրանունները, ազգանունները, քաղաքների  
գյուղերի, լեռների, փողոցների, յերկրների, ծովերի, հիմնարկների,  
լրագրերի և գրքերի անունները գրվում են մեծատառերով:

Հնչյուններ և տառեր: Հնչյուն և տառ, ձայնավոր և բաղա-

ձայն: Գիտենալ տառերի այբբենական կարգը. յեվ վորպես սը-  
ղագրություն նշան, գիտենալ, վոր և նշանը ձայնավորից հետո  
կամ առանձին գործածելիս յեռահնչյուն (յեվ) վանկի նշան և,  
վոր և սղագրություն նշանը մեծատառ և չունի, գրվում և լրիվ  
տառերով (յեվ):

Վանկ և տողագրած: Կարողանալ բառերը վանկերի բաժանել  
և տողագրած անել: Ը ձայնավորը տողագրածի ժամանակ:

Ուղղագրական վարժություններ գրություն և արտասանու-  
թյան անհամապատասխանություն վերաբերյալ՝ բ-փ, գ-ք, գ-թ,  
ջ-չ, ձ-ց, դ-խ:

Ցենթական յեվ ստորգյալը նախադասության մեջ.—Համառոտ  
նախադասություն:

Լրացումներ նախադասության մեջ.—Ընդարձակ նախադասու-  
թյուն: Նախադասության գլխավոր և յերկրորդական անդամները.  
Կարողանալ համառոտ նախադասությունը զարձակել ընդարձակ  
և ընդարձակ նախադասությունը՝ համառոտ:

Գոյական. —Ճանաչել նախադասության մեջ առարկա ցույց  
ավոր բառերը (մարդիկ, կենդանիներ, բույսեր, իրեր, բնական և  
հասարակական յերեույթներ): Գտնել, թե ինչ հարցերի յեն պա-  
տասխանում դրանք (ո՞վ, ի՞նչ): Գաղափար գոյականի մասին:  
Գոյականների թիվը. գաղափար հնչյունափոխություն մասին  
(գիրք—գրքեր, ձուկ—ձկներ): Գոյականների վորոշող հոդը. Ը ձայ-  
նավորի ուղղագրությունը բառավերջում և բառասկզբում, Գիտել  
գոյականի ձևերը՝ իբրև յենթակա և իբրև լրացում գործածվելու  
ժամանակ (մատիտը կոտրվեց: Վահանը կոտրեց մատիտը): Գա-  
ղափար ուղղական հոլովի մասին՝ յենթակայի կապակցությամբ:  
Հարցերով սովորեցնել մնացած հոլովները (սեռական, տրական,  
հայցական, բացառական, գործիական և ներգոյական): Ցերեք  
ձայնակապի ուղղագրությունը:

Ածական:

Նախադասության մեջ գտնել այն բառերը, վորոնք փոխարի-  
նում են գոյականին, անձնական դերանուններ՝ յես, դու, նա,  
մենք, դուք, նրանք:

Բայ.—Ստորգյալն իբրև գործողություն և դրություն ցույց  
ավոր բառ: Գաղափար բայի մասին: Բայի խոնարհումը, բայի  
ներկա, անցյալ յեվ ապառնի ժամանակները: Բայի խոնարհման  
ժխտողական ձևը: Բայի անորոշ ձևը: Բայի հրամայական ձևը. մի՛  
արգելականի ուղղագրությունը:

Բարդ բառեր.—Պարզագույն բառերի ոգնությամբ հասկանալ բարդ և պարզ բառերը: Յե և վա կապակցությունների ուղղագրությունը:

Ածանցավար բառեր.—Շատ գործածական նախածանցների և վերջածանցների ուղղագրությունը:

Գրավոր աշխատանքների ժամանակ ուղղագրական բառացուցակից ոգտվելու վարժություն: Պահել ուղղագրական բառատետր նշանակելով աշխտեղ այն բառերը, վորոնց գրելը դժվար է:

## ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

(Մեակման հաջորդականությունը)

Ծրագրային նյութը յերեք բաժիններով դասավորելն ամենավին չի նշանակում, թե պետք է առանձին պարապել կարդալով, առանձին՝ բանավոր և գրավոր խոսքի ունակությունների զարգացումով և առանձին՝ ուղղագրությամբ ու քերականությամբ: Ծրագրի բոլոր բաժինների մեջ պարապմունքների ընթացքում պետք է պահպանվի ամենասերտ կապը:

Կարդալու և գրելու տեխնիկայի, ուղղագրության ու քերականության միջև ծրագրով հատկացված 145 ժամը պետք է բաշխել համարյա հավասար: Խոսքի զարգացման հիմնական աշխատանքը հարում է կամ կարդալուն, կամ գրելու և քերականական վարժություններին:

Հայոց լեզվի դասերին շնորհ պիտի դնել կարդալու և գրելու վարժությունների վրա: Անհրաժեշտ է քերականությունից և ուղղագրությունից կրկնություններ և ամբողջ անցածի ամփոփումներ կատարել, հատկացնելով նրանց համար հատուկ ժամեր: Ուսուցչի առաջադրությամբ սովորողները պետք է կատարեն լրացուցիչ աշխատանք դասարանից դուրս (տնային ընթերցանություն, քերականության դասագրքից վարժություններ և այլն):

Կարդալու պարապմունքներ պետք է սկսել պարզ հոգվածներից և պատմվածքներից: Այդ աշխատանքի համար նյութ պիտի ծառային «Ընթերցարան»-ի, շրջանային թերթի վոչ բարդ հոգվածներն ու պատմվածքները, «Սկսնակ ընթերցողի գրադարան»-ի համառոտ պատմվածքներ և ամբողջական հատվածները: Ուսուցչիչը պարապմունքների հենց առաջին որերից պետք է հետևի, վոր

սովորողները կարդան ամբողջական բառերով, առանց տառեր բաց թողնելու, առանց աղավաղումների:

Շատ անհրաժեշտ է, վոր մեծահասակը, ավարտելով կիսագրագետների դպրոցը, կարողանա կարդալ վոչ միայն բարձր, այլև լուռ, վորպեսզի կարողանա իր պարապմունքների ընթացքում ինքնուրույն ոգտվել գրքից: Յերբ կիսագրագետների կարդալու տեխնիկան մի քիչ լավանում է, պետք է դպրոցում լուռ կարդալու վարժություններ կատարել: Դասատուի կողմից տրված առաջադրանքներով և հարցերով հոգվածի կարևոր տեղերն ընդգծել կամ արտադրել, տրված պլանով հոգվածը մասերի բաժանել և այլն:

Պարապմունքների ընթացքում դասատուն պետք է սովորողների մեջ աստիճանաբար սեր զարգացնի դեպի թերթը, կարդալով նրանց համար հետաքրքրական և արժեքավոր նյութեր, կազմակերպելով թերթի կոլեկտիվ ընթերցանություն: Սովորողները պետք է կարողանան վերնագրերով վորոշել հոգվածների բովանդակությունը, առանձին հարցերի վերաբերյալ թերթերից քաղվածքներ անել, թերթ կարդալիս ոգտագրծել աշխարհագրական քարտեզ: Ուսման տարվա յերկրորդ կիսում սովորողներին պետք է ծանոթացնել առաջնորդողի, հեռագրերի և թղթակցությունների նշանակությանը, պետք է սովորեցնել նրանց համառոտ պատմել թերթի վերջին յերկու-յերեք համարներում կարդացածի մասին: Այս աշխատանքի հիմնական նպատակն է՝ սովորողների համար թերթ կարդալը դարձնել միանգամայն մատչելի և սովորական աշխատանք:

Վորպեսզի սովորողները վարժվեն ինքնուրույն ընթերցանության, պետք է նրանց, տանը կարդալու համար, տալ մատչելի և նրանց հետաքրքրող գրքույկներ: պետք է դպրոցում կազմակերպել տանը կարդացած գրքերի քննարկում, պետք է բարձր կարգալ և քննարկել գեղարվեստական գրականության յերկեր:

Դասարանում և տանը կարդալու համար սովորողներին անհրաժեշտ է հանձնարարել Լ. Բ. Լենինի, Ստալինի, Վորոշիլովի, Կալինինի, Կազանովիչի առանձին ճառերը և հոգվածները:

Գեղարվեստական գրականություն—յերկեր և ամփոփ հատվածներ Մ. Գորկուց, Պուշկինից, Ն. Ոստրովսկուց, Ֆուրմանովից, Պերձ Պոռյանից, Մուրացանից, Նար-Դուրից, Շիրվանզադեից, Հովհաննես Թումանյանից և այլ գրողներից:

Անհրաժեշտ է հույժ գեղարվեստական և մատչելի վոտանա-  
վորներ և առականեր անգիր սովորեցնել: Դպրոցը պետք է սխառե-  
մատիկ կերպով սովորողներին վարժեցնի ոգավիճու գրադարանից,  
պետք է սովորեցնի գրացուցակով գիրք ընտրելը:

Բանավոր լի գրավոր խոսքի ունակությունները զարգանում են  
կարգալու և գրելու ու քերականության պարապմունքների հետ  
գուզնեթացաբար: Կարգալով դասարանում և տանը, սովորողները  
հարստացնում են իրենց բառապաշարը, ծանոթանում են հասա-  
լակական և քաղաքական կյանքում շատ տարածված տերմիններին:  
Այս ունակության զարգացման համար պետք է վարժեցնել տրված  
հարցերի պատասխաններին՝ գեղեցիկ ձևակերպումով, ընդարձակ  
նախադասությունները կրճատելով և համառոտ նախադասություն-  
ներն ընդարձակելով: Խոսքի զարգացման աշխատանքները չեն  
կարող սահմանափակվել առանձին ժամերով, այլ աշխատանքները  
պետք է կատարել ամբողջ ուս. տարվա ընթացքում հայոց լեզվի  
բոլոր դասերին:

Պետք է առաջին կիսամյակում կիսագրագետներին սովորեցնել  
կազմել գործնական գրություններ, ստացականներ, լիազորագրեր, չ  
համական և դիմումներ, ծանոթացնելով սովորողներին այդ գրու-  
թյունների որինակներին:

Յերկրորդ կիսամյակում կիսագրագետները պետք է սովորեն  
գրել թղթակցություններ, արձանագրություններ:

Գրելու տեխնիկայի ուղղագրության լի բերականության ուսու-  
ցումը պետք է տարվի միմյանց հետ սերտ կապակցված ձևով:  
Պարապմունքները տարվելու յեն ծրագրում նշված կարգով:

Սովորողները, պարապմունքների հենց սկզբից, հանգիստում  
են տարբեր ուղղադրական կանոններ ունեցող բառերի, ուստի  
դասատուն, չչեղվելով իր մշակած աշխատանքի պլանից, սովորող-  
ներին պետք է նախազգուշացնի և ուղղի նրանց կատարած սը-  
խանքները նույնիսկ այն դեպքում, յերը նրանք վերաբերում են  
գեո ևս չանցած կանոններին:

Ուսումնական տարվա սկզբից սովորողներին պետք է հասկա-  
ցողություն տալ նախադասության մասին:

Սովորողները պետք է իմանան, վոր խոսքը բաղկացած է նա-  
խադասություններից, նախադասություններն իրարից տարբեր-  
վում են իրենց իմաստով և առողանությամբ. նախադասության  
մեջ յեղած բոլոր բառերը, իմաստի տեսակետից, կապակցված են

միմյանց հետ և վոր նախադասության մեջ յեղած բառերի իմաս-  
տային կապը պարզվում է հարցերի ողնությամբ:

Բառերի կազմությանը ծանոթացնելու ժամանակ դասատուն  
սովորողների ուշադրությունը գլխավորապես պետք է կենտրո-  
նացնի նախդիրի, արմատի և վերջավորության վրա: Մակդիր-  
ների մասին պետք է տալ միայն ընդհանուր հասկացողություն,  
բերելով պարզագույն որինակներ:

Նախադասության անդամների մասին պետք է գաղափար տալ  
լստ նրանց նշանակության:

Գոյական անուններին ծանոթացնելու ժամանակ անհրաժեշտ  
է սկսել այն բառերից, վորոնք առարկա յեն ցույց տալիս (սե-  
ղան, դաշտ, և այլն), վորից հետո՝ սովորողների ուշադրությունը  
պետք է դարձնել նաև այնպիսի գոյականների վրա, ինչպիսիք  
են գործարան, կոտնտեսություն:

Այդ յերկու գոյականների ընդհանուր հատկանիշը կայանում  
է նրանում, վոր նրանք պատասխանում են „ինչ“ հարցին: Սո-  
վորողները պետք է իմանան, վոր յուրաքանչյուր գոյական ունի  
յեղակի և հոգնակի թիվ:

Անհրաժեշտ է սովորողներին ցույց տալ, թե ինչպես գոյական  
անուններն ըստ նախադասության մյուս անդամների և նրանց  
միջև յեղած կապի՝ յենթարկվում են փոփոխման, վորի հետևան-  
քով փոխվում են նաև տրվելիք հարցերը: Սովորողներին պետք  
է հասկացնել, վոր նման փոփոխությունները կոչվում են հոլով-  
ներ:

Հոլովների փոփոխման մասին սովորողներին պետք է տալ  
ընդհանուր հասկացողություն: Այն դասարաններում, ուր սովո-  
րողներն իրենց կրթական մակարդակով ավելի բարձր են կանգ-  
նած, կարելի յէ սովորեցնել, վոր կիսագրագետները կարողանան  
հոլովները միմյանցից տարբերել:

Ածական անունների ծանոթացումը ևս տարվելու յէ նույն  
կարգով, ինչպես գոյական անուններին: Այստեղ գլխավոր ուշա-  
դրությունը պետք է դարձնել ածական անունների մեջ առաջա-  
ցած փոփոխությունից (գոյականի թվի, հոլովի և այլն): Կիսա-  
գրագետներին պետք է սովորեցնել, վոր նրանց խոսակցության  
և գրավոր աշխատանքի ժամանակ ածականի և գոյականի միջև  
կարողանան պահպանել համաձայնական կապ: Կարիք չկա ման-  
րամասն կանգ առնելու ածականների հոլովների փոփոխման վրա:

3071  
38



Բայերի հետ ծանոթանալու ժամանակ սովորողների ուշադրութեանը պետք է դարձնել հատկապես այն փոփոխութիւնների վրա, վորոնք առաջանում են ժամանակի կապակցութեամբ:

## ԹՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

(125 ԺԱՍ)

(Կիսագրագեսների համար)

Ծրագրի ծավալը.—Ամբողջ թվերի կարգալն ու գրելը մինչև միլիարդ. ամբողջ թվերի գումարումը, հանումը, բազմապատկումն ու բաժանումը: Հասարակ կոտորակներ, կոտորակների գումարումը և հանումը, կոտորակի մեծացնելն ու փոքրացնելը մի քանի անգամ, մասի գտնելը՝ յերբ տված է ամբողջը և ամբողջի գտնելը՝ իր մասերից: Տասնորդական կոտորակների կարգալը, գումարումը և հանումը, տասնորդական կոտորակի բազմապատկումն ու բաժանումն ամբողջ թվի վրա: Թվի տոկոսը գտնելը, ուղղանկյան և քառակուսի մակերեսի վորոշելը, ուղանկյուն տան ծավալը գտնելը:

## ԲԱՅԱՏՐԱԿԱՆ

(Մշակման հաշուդրականութունը)

1. Կլոր թվերի կարգալը միլիոնի սահմանում: Գաղափար միլիարդի մասին: Կարգալ միլիարդի սահմանում: Մեծ թվերի կլորացումը:

2. Կլոր թվերի գումարումն ու հանումը: Զերոները նվազելի մեջ:

3. Բազմապատկում միանիշ թվի վրա: Բազմապատկում կլոր տասնյակներով, կլոր հարյուրյակներով և կլոր հազարյակներով: Բազմապատկում յերկանիշ, յեռանիշ և բազմանիշ թվերով: Զերո-

ները բազմապատկելի մեջ: Զերոները բազմապատկելիների մեջ տեղում և վերջում:

4. Բաժանում միանիշ թվի վրա: Յերկանիշ թվի բանավոր բաժանումը յերկանիշ թվի վրա: Թվի գլխավոր բաժանումը յերկանիշ, յեռանիշ և բազմանիշ թվերի վրա: Զերոները քանորդի մեջ և վերջում: Բազմապատկման և բաժանման ստուգումը: Ժամանակի չափեր: Մեծ չափերի փոխարինումը փոքրերով և ընդհակառակը:

5. Ուղիղ գծի հատվածի չափումը: Մակերեսի չափեր (քառակուսի մետր, քառակուսի կիլոմետր): Ուղղանկյան և քառակուսու մակերեսի հաշվումը:

6. Դիագրամների և դրաֆիկների ընթերցումը:

7. Հասարակ կոտորակներ<sup>1</sup>): Գաղափար կոտորակի մասին: Կոտորակի համարիչն ու հայտարարը: Կոտորակների կարգալն ու գրելը: Կանոնավոր և անկանոն կոտորակ: Ուտը կոտորակ: Անկանոն կոտորակից ամբողջ ստանալը: Ուտը կոտորակն անկանոն կոտորակ դարձնելը: Կոտորակների համեմատումը: Կոտորակների մեծացումն ու փոքրացումը մի քանի անգամ: Կոտորակի հիմնական հատկութիւնը: Կոտորակի կրճատումը:

Միանման հայտարար ունեցող կոտորակների գումարումն ու հանումը: Տարբեր հայտարարներ (վորոնցից մեկը մյուսների բազմապատկին է) ունեցող կոտորակների գումարումն ու հանումը: Ամբողջի մասը գտնելը և տված մասերով ամբողջը գտնելը (յերկու գործողութեամբ):

8. Տասնորդական կոտորակների հաշվումը մինչև հազարերորդական մասը: Տասնորդական կոտորակի համարիչն ու հայտարարը: Թվանշանի տեղային նշանակութիւնը թվի մեջ: Տասնորդական կոտորակի հիմնական հատկութիւնը, տասնորդական կոտորակի վերջում զերոներ ավելացնելը կամ յեղած զերոները ջնջելը կոտորակի մեծութիւնը թողնում է անփոփոխ: Տասնորդական կոտորակի մեծացնելն ու փոքրացնելը 10, 100 և 1000 անգամ և այլն:

Բարդ անվանական թվերի գրելը տասնորդական կոտորակով (մետրական չափեր): Մեծ թվերի կրճատ գրելը տասնորդական կոտորակով:

<sup>1</sup>) Կոտորակների հայտարար պետք է լինեն միայն միանուն կամ յերկանուն թվեր:

9. Տասնորդական կոտորակների գումարումն ու հանումը (բանավոր և գրավոր):

10. Տասնորդական կոտորակի բազմապատկումն ամբողջ թվով (բանավոր և գրավոր): Զերոներն արտադրյալի վերջում:

11. Տասնորդական կոտորակների բաժանումն ամբողջ թվի վրա (բանավոր և գրավոր): Ամբողջ թվի բաժանումն ամբողջ թվի վրա վորոշակի ճշտությամբ: Մոտավոր քանորդը պակասորդով և ֆնացորդով: Հասարակ կոտորակը տասնորդական դարձնելը:

12. Գաղափար տոկոսի մասին: Թվի մեկ կամ մի քանի տոկոսը գտնելը (բանավոր և գրավոր):

13. Ծավալի չափեր (խորանարդ մետր, խորանարդ դեցիմետր, խորանարդ սանտիմետր): Ծավալային չափերի հարաբերությունը: Ուղղանկյուն սենյակի ծավալի հաշվումը:

14. Ամփոփում և հաշվառում:

Ծանոթություն.--1. Յուրաքանչյուր բաժինն անցնելիս պետք է խնդիրներ լուծվեն: Ամբողջ դասընթացի ընթացքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել սովորողների կողմից խնդիրներ կազմելու և լուծելու վրա:

2. Դպրոցում պետք է լինեն հետևյալ ոժանդակ պարագաները. համրիչներ, չափերի նմուշներ, մետրական չափերի աղյուսակ, կոտորակները և տոկոսները պատկերող աղյուսակներ:

## ԺԱՍՆԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ԹԵՄԱՆԵՐԻ

1. Հաշվում միլիարդի սահմանում: Գումարման և հանման կրկնություն: Միանիշ թվի վրա բազմապատկման կրկնությունը: Բազմապատկում յերկանիշ և բազմանիշ թվերի վրա (25 ժամ):

2. Միանիշ թվի վրա բաժանման կրկնություն: Բաժանում յերկանիշ և բազմանիշ թվերի վրա: Ուղղանկյան և քառակուսու մակերեսի հաշվումը: Դիագրամների և գրաֆիկների ընթերցում (28 ժամ):

3. Հասարակ կոտորակներ (22 ժամ):

4. Տասնորդական կոտորակների հաշվումը, գումարումը և հա-

նումը: Տասնորդական կոտորակի բազմապատկումն ու բաժանումն ամբողջ թվի վրա (32 ժամ):

5. Տոկոսային հաշվումներ, ծավալների հաշվումներ և կրկնություն (18 ժամ):

Ծանոթություն.--Արտադրական պլան կազմելու ժամանակ դասատուն պետք է ժամեր հատկացնի կրկնություն համար:

## ԱՅԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

(60 ժԱՄ)

### Բ Ա Ց Ա Տ Ր Ա Կ Ա Ն

Ֆիսաղբազիտության վերացման դպրոցներում ավանդվում է աշխարհագրության ելեմենտար դասընթացքը: Դասընթացքի հաջող յուրացման նպատակով անհրաժեշտ է, վոր դասատուն ունենա մեթոդական մեծ փորձառություն և հիմնովին տիրապետի առարկային, քանի վոր տվյալ դեպքում մենք գործ ունենք հասակավորների այնպիսի կոնտինգենտի հետ, վորոնք ավարտելով անդրադրիտության վերացման դպրոցները, ունեն յուրահատուկ շահեր, ունակություններ և գիտական մակարդակ: Պարապմունքները պետք է զլխավորապես տեղի ունենան դասարանում դասատուի ղեկավարությամբ: Դասատուն պետք է ուշադրությամբ և մանրակրկիտ կերպով կազմի իր աշխատանքի պլանը և ընտրի այնպիսի նյութ, վորը կհամապատասխանի սովորողների ուժերին և կոժանդակի նրանց մեջ մշակելու Մարքս—Լենին—Ստալինյան աշխարհայացքը:

Աշխարհագրության դասընթացքն անցնելու համար հատկացրած է 60 ժամ, վորի հիման վրա դասատուն ժամերը դասավորում է ըստ թեմաների նպատակահարմար ձևով:

Հասակավոր սովորողների հետ անցնելու ամենատարածված մեթոդը այսպես է. դասատուն առաջ պատմում է, հետո անցնում է կենդանի դրույցի ծավալմանը. դասատուն հետևողականորեն ղնում է հարցերը և այդպիսով սովորողների մեջ առաջ է բերում հետաքրքրություն և ստանում իր դրած հարցերի պատասխանը: Զրույցը պետք է կադմակերպել այնպես, վոր նրան մասնակցեն բոլոր սովորողները: Զրույցը պետք է ընթանա վորոշ հունով և չպետք է շեղվի թեմայից:

Դասատուն պետք է թեմայի հիմնական յեզրակացությունները, համաձայն իր տարած դրույցի թեղիսները նախորոք ձևակերպած ունենա:

Այս ձևի դասավանդումը սովորողներին հնարավորություն է տալիս հաճախ արտահայտել իրենց կարծիքը, ոգնում է նրաց լեզվի զարգացմանը և ընդհանրապես ոժանդակում է սովորողների ակտիվությանը: Դասատուն պետք է հատուկ ուշադրություն դարձնի սովորողների զրազեա լեզվի մշակման վրա:

Աշխարհագրությունն ուսումնալիւելու համար ակելի լավ է կիրառել դիսոդակա մեթոդը: Այս դեպում սովորողները լայն կերպով կիրառում են եսկուրսիաներ, աշխարհագրական նկարներ, պրոեկցիոն լապսերի դիպոզասիվներ.

Աշխարհագրության դասի զլխավոր նիւքր քարեգի վրա արվող աշխատանքն է

Լուրջ ուշադրություն պետք է դարձնել քարտեղի յուրացման վրա: Սովորողները պետք է քարտեղին տիրապետեն այն չափով, վոր առանց դրքի և առանց դասատուի կարողանան քարտեղի վրա իմանալ աշխարհի բնական պայմանները, մձուել քաղաքական տնտեսական յերեույթները, իսկ սրա համար ինքը դասատուն պետք է լավ իմանա քարտեղի գործադրությունը և նրա ամբողջական ոգտագործումը դասի ընթացքում: Սովորողներին պետք է ցույց տալ քարտեղի վրա վոչ թե այս կամ այն տեղը, այլ ստիպել, վոր նա ինքը գտնի դասին վերաբերվող տեղերը: Բացի պատի քարտեղից, սովորողները պետք է իմանան ոգտվել նաև ասլապից ու փոքրիկ քարտեղից:

Նոր անուն անցնելիս լավ է այն գրել գրատախտակի վրա և ստիպել, վոր սովորողները ձիշտ արտագրեն իրենց տետրերում: Վերջապես պետք է նշել, վոր աշխարհագրությունը վոչ միայն բացատրում է այն ինչ վոր կա, այլ և այն պատճառները, վո-

րոնց հետեանքով առաջ են յեկել այդ յերևույթները: Դասատուի խնդիրն ե՛ր յերևան բերել յերևույթների բնական որոնքները. դասատուն պետք և մասսայական յերևույթներից ընտրել բնորոշներն ու տիպիկները:

Ակտիվ սոցիալիստական շինարար լինելու համար պետք և լավ խմանալ մեր յերկրի աշխարհագրությունը, վրի համար աշխարհագրության ուսուցումը պետք և սերտ կերպով կապել ներկա ժամանակի և սոցիալիստական շինարարության գործնական խնդիրներին հետ:

## I. Ի՞նչ և աշխարհագրությունը յեվ ինչո՞ւ պե՞տ և այն սովորե՞լ

Աշխարհագրության նշանակությունը (տնտեսական, քաղաքական և կրթական): Տարբեր յերկրների բնության, տնտեսության և կուլտուրայի գնահատման յուսուցումը:

## II. Յերկիրը — մոլորակ

Հասկացողություն հորիզոնի մասին. հորիզոնի կողմերը և կողմնորոշում տարածության մեջ: Հորիզոնի ընդարձակումը վեր բարձրանալուն համընթաց:

Յերկրի ձևը. յերկրի գնդաձևության ապացույցներ: Գլոբուսը վորպես յերկրագնդի պատկերում:

Յերկրագնդի պտույտն իր առանցքի և արեգակի շուրջը. Լնչ և առաջանում այդ պտույտի հետեանքով: Յերկրագնդի որական շարժումը. գիշեր և ցերեկ: Բևեռներ և հասարակած: Յերկրագնդի տարեկան շարժումը: Յերկրագնդի առանցքի թեքությունը և տարվա յեղանակները: Գիշերվա և ցերեկվա տևողության փոփոխվելը տարվա ընթացքում:

Արեգակը վորպես ջերմության և եներգիայի (և առհասարակ կյանքի) աղբյուր յերկրի վրա: Արեգակնային համակարգություն: Յերկրագնդի դիրքն արեգակնային համակարգության մեջ: Առաջներում ինչպե՞ս եյին պատկերացնում յերկիրը:

Յերկրի մասին ճիշտ պատկերացում ունենալու համար մղված պայքարի պատմությունից կարևորագույն մոմենտներ (Կոպերնիկ, Բրունո, Գալիլեյ): Արեգակնային համակարգությունը վորպես տիեզերքի մի մասը: Աստղեր և մոլորակներ: Յերկիրը—մոլորակ:

## III. Պլան յեվ քարտեզ

Գաղափար պլանի մասին. պլանը կառուցելու ձևերը և գործադրությունը:

Պլանը և աշխարհագրական քարտեզը:

Յերկրի մակերեսի պատկերումը գլոբուսի և կիսագնդերի քարտեզի վրա:

Աշխարհագրական ցանցը: Զուգահեռականներ և միջոքայականներ:

Աշխարհագրական լայնություն: Աշխարհագրական յերկարություն:

Աշխարհագրական ցանցից ոգտվելու տարրական հասություններ:

Յամաքի և ջրի բաշխումը յերկրագնդի վրա:

Աշխարհի մասերը.—Յեվրոպա, Ասիա, Ամերիկա (Հյուսիսային և Հարավային), Աֆրիկա, Ավստրալիա և Անտարկտիդա:

Ովկիանոսներ.—Խաղաղ կամ Մեծ, Ատլանտյան, Հնդկական, Հյուսիսային Սառուցյալ:

Գաղափար ծովի, ծոցի և նեղուցի մասին:

Մովերը.—Բալթիկ, Սև, Միջերկրական:

Մոցերը.—Մեկսիկական, Բիսկայան, Բենգալյան, Ֆիննական:

## IV. Յերկրի կեղծվը

Յերկրագնդի կեղևները. յերկրի կեղևը (կարծր) և մթնոլորտը (գազային): Յերկրագնդի ներքին կազմությունը: Յերկրի կեղևի կազմությունը: Հրաբուխներ, յերկրաշարժներ: Զանգվածային և նստվածքային լեռնային տեսակներ:

Յերկրի մակերևութի ձևերը. գաշտավայրեր, բարձրություններ և լեռներ: Սրանց պատկերումը քարտեզի վրա:

Յերկրի ընդերքի հանածո հարստություններն են երգիայի և հումքի կարևորագույն աղբյուրները:

Աշխարհամասերի մակերևութի ուսումնասիրությունը քարտեզով:

Յեղրոպա. Արևելա-Յեզրոպական, Գերմանական, Ֆրանսիական դաշտավայրեր: Ալպյան, Կարպատյան, Ուրալյան և Կովկասյան լեռներ:

Ասիա. — Արևմտա-Արբրական, Թուրանի, Չինական դաշտավայրեր: Պամիրի լեռնաշխարհ. Տյան-Շան և Հիմալայան լեռներ:

Ամերիկա. — Միսիսիպիի, Ամազոնի դաշտավայրեր: Կորդիլերյան, Ալեգանյան լեռներ:

#### V. Ովկիանոսներ, ծովեր, գետեր յեվ լճեր

Ովկիանոսներ յեվ ծովեր. — Ովկիանոսների խորությունը: Ծովային ջրի աղիությունը: Ծովային հոսանքներ (ցուրտ և տաք): Մակընթացություններ և տեղատվություններ: Ծովափնյա գծի կարտածությունը. ծոցեր, նեղուցներ, թերակղզիներ և կղզիներ: Ծովերի հաղորդակցային և արգյունագործական նշանակությունը: Ծովային կարևոր ճանապարհները և պաշար նրանց համար:

Ծովեր. — Միջերկրական, Սև, Կասպից, Բալթիկ, Ճապոնական: Թերակղզիներ. — Սկանդինավիայի, Պիրենեյան, Ապենինյան, Բալկանյան, Ղրիմի, Հնդկական, Հնդկաչինի, Կամչատկա:

Կղզիներ. — Գրենլանդիա, Մեծ-Բրիտանիա, Զոնդյան, Ճապոնական, Ովկիանիա:

Նեղուցներ. — Զիբրալտարի, Դարդանելի, Բոսֆորի, Բերինգյան:

Զրանցքներ. — Սուեզի և Պանամայի:

Յամաֆի ջրեր. — Գետնի ջրերը: Աղբյուրներ:

Գետեր. — Գետերի սնումը և ուղղությունը: Գետերը վորպես հաղորդակցության ճանապարհներ, են երգիայի և վոռոգման աղբյուրներ: Զրանցքներ: Զրի կործանարար և շինարար աշխատանքը. ձորեր, գետաններ, կղզիներ:

Գետեր. — Վոլգա՝ Ոկա և Կամա վտակներով, Դնեպր, Դանուբ, Հոնոս, Ուր, Յենիսեյ, Լենա, Ամուր, Նեղոս, Միսիսիպի, Ամազոն:

Լճեր. — Հոսող և կանգնած. աղի և քաղցրահամ: Լճեր, Լագոզա, Ռենգա, Արալյան, Բայկալ, Բալխաշ:

Յեղանակ, նրա տարրերը. ջերմություն, քամիներ, տեղումներ: Դադարակար կլիմայի մասին: Կլիմայի նշանակությունը տրանսպորտի համար: Պաշար կլիմայական ֆնասակար պայմանների դեմ:

Արեգակի տարրեր բարձրությունը հորիզոնի վրա՝ յերկրագնդի տարրեր վայրերում: Յերկրագնդի բաժանումը հինգ գոտիների:

Յամաքի և ծովի անհավասար տաքանալը: Յամաքային և ծովային կլիմա: Ծովային հոսանքների աղբյուրությունը կլիմայի վրա: Վայրի (տեղի) բարձրության աղբյուրությունը կլիմայի վրա (լեռնային կլիմա): Մթնոլորտային տեղումների բաշխումը յերկրագնդի վրա: Խոնավ շրջաններ: Յերկրագնդի անապատները:

#### VII. Յերկրագնդի հողաբուսական գոտիներ (գոմաներ)

Հողի, բուսականության և կենդանական աշխարհի կախումը կլիմայից: Սրանց գոտիական (զոնալ) տեղարաշխումը յերկրագնդի վրա:

Բնեռային շրջաններ, տունդրա, անտառ, տափաստան, կիսաանապատ, անապատ, մերձարևադարձային շրջաններ, արևադարձային անտառներ և սավաններ, Գոտիներից յուրաքանչյուրի հողերի, բուսականության և կենդանիների բնութագրումը:

Բնական հարստությունների ոգտագործումը մարդու կողմից առաջ և այժմ: Այս տեսակետից գիտության, տեխնիկայի և յերկրի հասարակական կառուցվածքի (կապիտալիստական և սոցիալիստական) դերը:

#### VIII. Յերկրագնդի բնակչությունը

Յերկրագնդի բնակելի և անբնակ վայրերը: Յերկրագնդի բնակչության քանակը: Նրա բաշխումն ըստ աշխարհամասերի: Ռասաներ: Բարձր և ցածր ուսմանների ուսմունքի կեղծ լինելը: Բնակ-

Հոկտեմբերյան խառնվածքը: Ամենախիտ բնակչություն ունեցող վայրերը յերկրագնդի վրա այժմ: Յերկրագնդի բնակչության աշխարհագրական տեղաբաշխումն առաջնորդում:

## IX. Անտարկի արդի պետական բաժանումը

Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխությունից հետո աշխարհի բնական վերլույսը սխառնված սոցիալիստական սխառնված և կապիտալիստական սխառնված:

Ինչո՞վ են տարբերվում կապիտալիստական յերկրները ԽՍՀ Միությունից: Պետական իշխանություն կազմությունը կապիտալիստական յերկրներում (բարձրագույն իշխանություն ներկայացուցիչն է՝ թագավորը կամ պրեզիդենտը. գործադիր իշխանությունը՝ պրեմիեր-մինիստրը և մինիստրներ. որենտդիր իշխանությունը՝ պարլամենտը): Պարլամենտական բնարությունները և նրանց դասակարգային բնույթը տարբեր յերկրներում: Ֆաշիստական դիկտատուրան զանազան յերկրներում (Գերմանիա, Իտալիա):

Յերկրների բաժանումը 3 խմբի—ըստ կապիտալիզմի դարգացման մակարդակի,

1. Բարձր զարգացած յերկրներ. — ԱՄՆ, Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա, Ճապոնիա, Բելգիա, Նիդերլանդիա. Չեխոսլովակիա և այլն:

2. Զարգացումն միջին մակարդակ ունեցող յերկրներ. — Լեհաստան, Իսպանիա, Ռումինիա, Բուլղարիա և այլն:

3. Գաղութներ յեվ կախյալ յերկրներ. — Հնդկաստան, Հնդկաչին, Չինաստան, Յեզիպոս, Լիբիա, Ալժիր և այլ յերկրներ Աֆրիկայում, Ամերիկայի մեծ մասը (առանց ԱՄՆ-ի):

Կապիտալիստական յերկրների քաղաքականությունը դադարեցրել է կախյալ յերկրների նկատմամբ: Պայքար հումքի աղբյուրների և շուկաների համար: 1914—1918 թ. իմպերիալիստական պատերազմը:

Համառոտ սեսություն. — ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի և մեր հարևանների (Ֆինլանդիայի, Եստոնիայի, Լատվիայի, Լեհաստանի, Ռումինիայի, Թուրքիայի, Իրանի, Ադրիանոստանի, Չինաստանի և Մոնղոլիայի ու Տուվայի ժողովրդական հանրապետությունները):

## X. ԽՍՀՄ համառոտ սեսությունը

### I ԽՍՀՄ դիրքը.

Տերիտորիայի չափերը և բնակչության քանակը: ԽՍՀՄ-ի դիրքը Յեվրոպայում և Ասիայում:

Յամաֆային սահմանները—(սահմանամերձ յերկրներ):

Մովային սահմանները. — Մովեր—Բարենցի, Սպիտակ, Կարայի, Բերինգյան, Ռիտտի, Ճապոնական, Սև, Ադովի, Կասպից, Բալթիկ:

Թերակղզիներ. — Ղրիմի, Կուլա, Կամչատկա, Չուկոտյան, Թայմիր:

Կղզիներ. — Սախալին, Նոր Յերկիր:

Նավանագիսներ. — Լենինգրադ, Մուրմանսկ, Արխանգելսկ, Իզարկա, Վլադիվոստոկ, Նովորոսիյսկ, Ուկեսսա, Բաթումի:

### 2. ԽՍՀՄ մակերեկվայքը.

Դաշտավայրային հարթությունների զերակշռումը: Բարձրություններ: Լեռների ծայրամասային դասավորությունը:

Դաշտավայրեր. — Արևելա-Յեվրոպական, Արևմտա-Սիբիրական, Թուրանի:

Հայաստանում՝ Արարատյան, Շիրակի:

Ադրբեյջանում՝ Բուռնի:

Վրաստանում՝ Ռիոնի:

Բարձրություններ. — Միջին-Ռուսական, Մերձվոլգյան, Դոնեցի, Միջին-Սիբիրական լեռնաշխարհը:

Հայաստանում՝ Լոռու, Սևանի, Դարալագյազի, Զանգեզուրի:  
Վրաստանում՝ Ախալքալաքի:  
Ադրբեջանում՝ Լեռնային Ղարաբաղի:

Լեռները.—Ուրալյան, Ղրիմի, Կովկասյան, Խիբինի, Պամիրի,  
Տյան-Շան, Ալտայան, Կամչատկայի և այլն:

Հայաստանում՝ Բղովզազի, Փամբակի, Ամանդանի, Շահազի,  
Զանգեզուրի:

Վրաստանում՝ Սուրամի, Թրիալեթի:

Ադրբեջանում՝ Մոսվի, Թալիշի:

3. ԽՍՀՄ-ի ոգտակար հանածոները.—Ոգտակար հանածոները  
չհետախուզված լինելը ցարական Ռուսաստանում: Խորհրդային  
Ժամանակաշրջանում ձեռք բերած նվաճումները:

Քարածխային ավազան.—Դոնեցի, Կուզնեցկի, Կարադանդայի,  
Ընդոսկովյան և այլն:

Վրաստանում՝ Տղիբուլիի և Տղվարչեի:

Նավթ.—Բագու, Գրոզնի, Եմբա, Ուրալ և այլն:

Ցերկաքաղաք.—Կերչ, Կրիվոյ-Ռոգ, Ուրալ (Բլադոդատ, Մագ-  
նիտնայա, Խալիլովո), Կուրսկի մագնիտային անոմալիան (ԿՄԱ):

Ադրբեջանում՝ Դաշքեսան:

Պղնձաձեռք.—Ուրալ, Ղազախստան:

Հայաստանում՝ Ալաշկերտ, Ղափանի:

Վոսկի.—Սիրի, Ուրալ, Միջին Ասիական հանքապետություն-  
ներ:

Մարգանց.—Ուկրաինա, Վրաստան (Զիատուրի)

Ապաքիտներ լիվ Ֆոսֆորներ:

4. ԽՍՀՄ-ի գետերն ու լճերը.

Հարթահոս գետերի գերակշռումն ու բնույթը: Նրանց առանձ-  
նահատկությունները. ձմռանը՝ սառցապատում, գարնանը՝ վարա-

րում, ամռանը՝ ծանծաղում: Գետերի ոգտագործումը նավագնա-  
ցության, երկաթի ֆիկացիայի, վոդոգման համար: Զրանցքներ:

Պետեր.—Հյուսիսային Դվինա, Պեչորա, Ուրալ-Իրտիշ վտակով,  
Յենիսեյ—Սնգարա վտակով, Լենա: Ամուր, Նեա, Վոլխով, Սվիր,  
Դնեպր, Դոն, Վոլգա—Ոկա և Կամա վտակներով, Սիր-Դարիա և  
Ամու-Դարիա:

Վրաստանում՝ Կուր—Արագվա, Ալազան, Յորա և Խրամ վտակ-  
ներով. Ճորոխ, Ռիոն, Խնգուր (Թափվում են Սև ծովը):

Ադրբեջանում՝ Կուր և Արաքս (ստորին հոսանքները):

Հայաստանում՝ Արաքս—Ախուրյան (Արփաչայ), Բասախ, Զան-  
գու, Դյառնի, Վեդի, Արեւիկյան Արփաչայ—Բաղարշայ և Մեղրի  
վտակներով. Բուռլի վտակ Խրամի մեջ Թափվող Դեբեդը—վո-  
րակավում և Զորագետ և Փամբակ գետերից: Սևանա լճի մեջ  
Թափվում են 26 մանր գետեր (Բավառ, Աղիաման, Մազրա և  
այլն):

Զրանցքներ.—Վոլգա-Բալթիկ ծովյան, Սպիտակ-Բալթիկծո-  
վյան, Վոլգա-Մոսկվա (վոլգես հաղորդակցության ճանապարհ-  
ներ):

Հայաստանում՝ Շիրակի, Մարդարաբադի, Ղոբրի և այլն (վո-  
ոգման համար):

Վրաստանում՝ Ալազանի ջրանցքը:

Ադրբեջանում՝ Մուղանի, Միլի, Ղարաբաղի տափաստանների  
ջրանցքները:

Լճեր՝ Լադոգա, Ռենգա, Ելտոն, Բասկունչակ, Արալյան, Բալ-  
խաշ, Բայկալ:

Վրաստանում՝ Թափաբալան:

Հայաստանում՝ Սևանա, Արփա:

Ադրբեջանում՝ Ախալա:

5. ԽՍՀՄ-ի կլիման լիվ հողաբուսական գոտիները.

ԽՍՀՄ-ի տեղադրվածությունը ցուրտ և բարեխառն կլիմայում:  
Հյուսիսային Սառուցյալ, Խաղաղ և Ատլանտյան ովկիանոսների  
ազդեցությունը: Կլիմայի փոփոխությունն արեմուտքից—արևելք  
(դեպի արևելք՝ ցամաքային կլիմայի հատկությունների ուժեղա-  
ցումը):

ԽՍՀՄ-ի հողաբուսական գոտիները:

Արևմտյան, Արևելյան և Հարավային Անդրկովկասի կլիմայի առանձնահատկությունները: Հողաբուսական գոտիների ուղղաձիգ դասավորվածությունն Անդրկովկասում:

6. ԽՍՀՄ-ի բնակչությունը. — Բնակչության քանակը, բնական աճը, խտությունը և նրա դասավորվածությունը ԽՍՀՄ-ի տերիտորիայի վրա: ԽՍՀՄ-ի բնակչության ազգային կազմի բազմազանությունը:

Անդրկովկասի բազմազգի ժողովուրդները:

ԽՍՀՄ-ի պետական կառուցվածքը.

ԽՍՀՄ-ի հասարակական կառուցվածքը: ԽՍՀՄ-ն բանվորների և զյուզագիների պետությունն է. նրա քաղաքական և տնտեսական հիմքը: ԽՍՀՄ-ի քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտականությունները:

ԽՍՀՄ-ի պետական կառուցվածքը: ԽՍՀՄ-ն կազմող տասնմեկ միութենական հանրապետությունները և նրանց մայրաքաղաքները: ՌՍՖՍՀ-ի և մյուս միութենական հանրապետությունների ավտոնոմ հանրապետություններն ու մարզերը: Բաժանումը՝ մարզերի և յերկրների (որինական):

ԽՍՀՄ-ի պետական իշխանության բարձրագույն օրգանները: Գերագույն Խորհուրդը և նրա կազմը: Միության Խորհուրդ և Ազգությունների Խորհուրդ: Ժողովրդական Կոմսարներ Խորհուրդ: Ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունք՝ գաղտնի քվեարկությամբ:

3. ԽՍՀՄ-ի սննդությունը.

Բնական հարստություններն ու սոցիալիստական սիստեմը խորագույն հնարավորություններ ստեղծեցին ԽՍՀՄ-ի տնտեսության զարգացման համար: Առաջին և յերկրորդ հնգամյակների նվաճումները (մեր յերկրորդ հետամուտ փուլակից վերածվեց հզոր ինդուստրիալ յերկրի): Յերկրի պաշտպանունակության հզորության ամրապնդումը: Ազգային շրջանների և ծայրամասերի — ցա-

րական Ռուսաստանի այս նախկին գաղութների, իսկ այժմ ԽՍՀՄ -ի հավասարազոր անդամների տնտեսական և կուլտուրական վերելքը:

Ելեկտրիֆիկացիան Խորհրդային իշխանության տնտեսական և տեխնիկական քաղաքականության հիմքն է: Խոշորագույն ելեկտրակայանների կառուցումը, վոլտեղ ոգտագործվում են վառելիքի զանազան տեսակները (քարածուխ, նավթ, տորֆ և այլն), ինչպես և ջրի եներգիան («սպիտակ ածուխ») և քամին: Ելեկտրականներ — Շատուրի (տորֆ), Դենպրի և Վոլխովի («սպիտակ ածուխ»), Կաշիրի (տեղական գորշ քարածուխ), Շտերովի (քարածխային շաիր) և այլն:

Վրաստանում՝ Ռիոնգես, Չագես:

Հայաստանում՝ Բանաքեոգես, Սեան-Չանդու կասկադ, Չորագես, Երզես, Լենգես, շրջանային հիդրոէկայաններ:

Ադրբեյջանում՝ Թարթաոգես և այլն:

Արդյունաբերությունը. — Խոշորագույն գործարաններն ու կոմբինատները. մեխաղամեխանի (Մադնիտոգորսկ, Ստալինսկ, Դոնբաս, Կրիվոյ-Ռոդ, Կերչ, Տագիլ), ավտոմոբիլային (Մոսկվա, Գորկի), սրահսրային (Ստալինգրադ, Խարկով, Չելյաբինսկ), կոմբայնների (Սարատով), ռոգեկառավարչային Կոլոմնա, Վարշիլովգրադ և այլն), նավաթնարաւական (Լենինգրադ, Վլադիվոստոկ, Գորկի, Նիկոլաև, Ելեկտր-սեխնիկական լեվ զազգյանաթնարաւական (Մոսկվա, Լենինգրադ), փոխական (Բերեզնիկի, Ստալինոգորսկի, Դոնբասի), սեխսիլ գործարաններ Մոսկովյան և Իվանովյան մարզեր, Լենինգրադ, Տաշքենա, Բարնաուլ — Արևմտա-Սիբիրյան շրջան Անդրկովկասի ԽՍՀ), քղրի գործարաններ (Բալախնայի, Լենինգրադի մարզի, Կամայի և Կարելիայի): Թեթև և սննդի արդյունաբերության զարգացումը ԽՍՀՄ-ում:

Վրացական ԽՍՀ-ում՝ քիմիական, մետաղամշակման, տեքստիլ, սննդի և այլ գործարաններ:

Ադրբեյջանի ԽՍՀ-ում՝ նավթամշակման, բամբակագործական, տեքստիլ և այլն:

Հայկական ԽՍՀ-ում՝ Կաուչուկ, քիմիոմբինատ, մետաղամշակման, տեքստիլ, բամբակամշակման, սննդի և այլն.

Գյուղատնտեսության վերակառուցումը. (ԽՍՀՄ-ն դարձել է ամենախոշոր և առաջավոր սոցիալիստական գյուղատնտեսության յերկիրն ամբողջ աշխարհում) կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններ:

Քարտեզով ցույց տալ ցորենի, անասնապահության, հաճարի, շաքարի ձախդեղի, բամբակի, վուշի գլխավոր շրջանները:

Վրացական ԽՍՀ-ի գյուղատնտեսական կարեվոր կուլտուրաները  
յեվ նրանց տարածման օրանները

Վրացական ԽՍՀ-ն իր կլիմայի տեսակետից, Սուրամի կամ Մեսխիական լեռներով բաժանվում է յերկու հիմնական մասերի. Արևմտյան Վրաստան և Արևելյան Վրաստան:

Արևմտյան Վրաստանն ունի խոնավ կլիմա, մթնոլորտային տեղումները բավականին շատ են:

Արևելյան Վրաստանն ընդհակառակը—ավելի չորային կլիմա ունի և մթնոլորտային տեղումներն ել համեմատաբար սակավ են:

Կլիմայի այդ տարբերությունը, իհարկե, անդրադառնում է նաև գյուղատնտեսական մշակույթների տարածման վրա: Հիմնականում գյուղատնտեսական կուլտուրաների մշակույթը կարելի յե բաշխել հետևյալ կերպ.

Խաղողի, պտղատու ծառերի մշակություն և շերամապահություն—Քուրթայի շրջան, Գորի, Կախեթի, Բորչալույի, Ախալ-ցխա-Բորժոմյան շրջանները և այլն:

Թեյ, ցիտրուսային և մերձ-արևադարձային բույսեր Աջարի, Աբխազի և Փոթի շրջանը:

Ծխախոտի մշակությունը—Աբղաղի (Սուխումի) և Կախեթի (Լազոդեխի):

Բամբակի մշակությունը—Քուրթայի, Կախեթի, Բորչալույի, Ղարաբաղի շրջանները:

Հացաբույսերի մշակույթներ—Վրաստանի համարյա բոլոր շրջաններում, իսկ Արևմտյան Վրաստանում հատկապես յեգիպտացորեն:

Անասնապահություն և անասնաբուծություն—Ախալքալաքի, Բորչալույի շրջանները, Հյուսիսային Ոսեթիայի ավտոնոմ մարզը և առհասարակ Վրաստանի Հյուսիսային և Հարավային բարձրագույն շրջանները:

Ադրբեջանի ԽՍՀ-ի գյուղատնտեսական կարեվոր կուլտուրաները յեվ նրանց տարածման օրանները

Ադրբեջանի ԽՍՀ-ը, գյուղատնտեսական կուլտուրաների մշակման տեսակետից, հիմնականում կարելի յե բաժանել յերեք մասի.

ա) Քուռի և Արաքսի հովիտներն իրենց ամբողջ յերկարությամբ:

Այս շրջանները հիմնականում բամբակադործական, այգեգործական ու բանջարաբուծական շրջաններ են:

բ) Հյուսիսային (Ձաքաթալայի, Նուխու, Շամախու, Ղուբայի և այլն) և Հարավային (Կիրովաբադի, Նախիջևանի ԱԽՍՀ-ի, Լեռնային Ղարաբաղի ԱՄ-ի և այլն) բարձրագույն շրջանները, վորոնք հիմնականում անասնապահական-անասնաբուծական և հացահատիկների մշակության, այգեգործական, ծխախոտի մշակության և շերամապահության շրջաններ են:

գ) Թալիշի շրջանը, վորտեղ Թալիշի լեռների շնորհիվ կուտակվում են Կասպից ծովից փչող խոնավաբեր քամիները և ստեղծվում է մերձ-արևադարձային կլիմա. այս շրջանը հիմնականում արևադարձային և ցիտրուսային կուլտուրաների մշակության շրջան է:

Հայկական ԽՍՀ-ի գյուղատնտեսական կուլտուրաները յեվ նրանց տարածման օրանները

Ըստ գյուղատնտեսական կուլտուրաների մշակման՝ Հայկական ԽՍՀ-ը կարելի յե բաժանել յերեք գոտիների՝ հյուսիսից—հարավ.

1. Հյուսիսային գոտում ընդգրկվում են՝ Ամասիայի, Ստեփանավանի, Ալավերդու, Իջևանի, Շամշադինի, Կիրովականի ու Դիլիջանի շրջանները, վորոնք գերազանցապես անասնապահական անասնաբուծական շրջաններ են։ Այս շրջանները Հայաստանի անտառապատ շրջաններն են, ունեն լավ կլիմա, վորի պատճառով համարվում են մեր ամառանոցային վայրերը, ունեն սանատորիաներ, հանգստյան տներ։ Այս շրջաններում զարգացած է խոտաբուծությունը, արմատապտուղների և կարտոֆիլի մշակությունը, հացահատիկային մշակությունը, մեղվաբուծությունը և ծխախոտագործությունը։ Այս գոտում պետք է մտցնել նաև Սիսիանի շրջանը, վորպես անասնապահական շրջան։

2. Միջին գոտում ընդգրկվում են Լենինականի, Թալինի, Արթիկի, Ապարանի, Ախտալի, Ն. Բայազետի, Մարտունու, Բասարգեզարի շրջանները։ Այս շրջանները գերազանցապես հացահատիկային շրջաններ են։ Չարգացած է նաև ձկնադեղի մշակությունը (Լենինական), անասնապահությունը (Ապարան, Մարտունի), ձրկնորսությունն ու ձկնարդյունաբերությունը (Սեանա լճի սահմանակից շրջանները, վորտեղ հացահատիկների մշակության համահավասար զարգացած է նաև անասնապահությունը։

3. Հարավային գոտում ընդգրկվում են՝ Հոկտեմբերյանի, Վաղարշապատի, Ղամարլի, Վեդու, Աշտարակի, Կոտայքի, Միկոյանի և Մեղրու շրջանները։ Այս շրջանները գերազանցապես այգեգործական (խաղողի մշակության և պտղաբուծության) և բամբակագործական շրջաններ են (առաջին չորսը)։ Աշտարակի, Կոտայքի և Միկոյանի շրջանների հարավային մասն այգեգործական, իսկ հյուսիսային մասը՝ հացահատիկների և մասամբ ծխախոտի մշակության վայրեր են։ Այս գոտում մեծ չափով զարկ է ստացել նաև շերամապահությունը։

Այնուամենայնիվ պետք է ընդգծել, վոր արտադրական ուժերի, գիտություն և տեխնիկայի զարգացման շնորհիվ գյուղատնտեսական կուլտուրաների մշակության նման պատենշավորումը հետըհետե վերանում է և Հայաստանում առավելապես ավելի շատ են գյուղատնտեսական խառն կուլտուրաներ ունեցող շրջաններ։ Մի շարք շրջաններ, վորոնք վոչ միայն պտղատու ծառեր չունեյին, այլև հնուց համարվում էյին բաղամայա բույսերի մշակման համար վոչ պիտանի վայրեր (որինակ՝ Ն. Բայազետ, Մարտունի,

Բասարգեզար և այլն), հետզհետե ծառադարձվում են և պտղատու ծառերի այգիներ են դցվում, ծավալվում է բանջարաբուծությունը, և այլն։

### Հաղորդակցության համապարհներ

Տրանսպորտի նշանակությունը ժողովրդական տնտեսության և յերկրի պաշտպանության համար։ Յերկաթուղային ցանցի բաշխումը ցարական Ռուսաստանում։ Յերկաթուղային շինարարությունը ԽՍՀՄ-ում, ելեկտրիֆիկացիա։ Յերկաթուղիների քարտեզը։

### Հաղորդակցության համապարհներն Անդրկովկասում

Բագու—Թբիլիսի, Ալյաթ—Ղափան, Թբիլիսի—Բաթումի, Խաշուրի—Փոթի, Թբիլիսի—Յերևան, Յերևան—Ջուլֆա և այլ գծեր։ Հիմնական գաղափար ջրային տրանսպորտի մասին (ծովային և գետային)։ Ավտոմոբիլային և ողային տրանսպորտ։ Հյուսիսային ծովային ճանապարհը։



# Յ Ա Ն Կ

|                                                   | Եջ |
|---------------------------------------------------|----|
| Հայոց լեզու անգրագիտ. վերացմ. դպրոցի . . . . .    | 3  |
| Թվաբանություն անգրագիտ. վերացմ. դպրոցի . . . . .  | 8  |
| Հայոց լեզու կիսագր. վերացմ. դպրոցի . . . . .      | 11 |
| Թվաբանություն կիսագր. վերացմ. դպրոցի . . . . .    | 18 |
| Աշխարհագրություն կիսագր. վերացմ. դպրոցի . . . . . | 22 |

2

<< Ազգային գրադարան



NL0237503

Պատանդանառու խմբագիր Ա. Մացմանյան

Տիբոժ 2060

Գլավիտի լեզուր № 1185 Պատվեր № 665,

Հանձնված է տպագրության 1938 թվի 21/III-ին

Ստորագրված է տպագրության համար 1938 թվի 26/IV-38-ին

Վրաստանի Պետհրատի Պոլիգրաֆիկոմբինատ, Թբիլիսի, Ժուրեսի փ. № 5

211

54.795

38.200



ПРОГРАММЫ  
для школ по ликвидации  
НЕГРАМОТНОСТИ И МАЛОГРАМОТНОСТИ

Госиздат Груз. ССР  
Тбилиси 1988 г.